Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ **15.04.2025**

Օգտագործման Ընդհանուր Պայմաններ

Օգտագործման սույն ընդհանուր պայմանները և պայմանագրային դրույթները (այսուհետ՝ «Ընդհանուր Պայմաններ») տարածվում են «Մեյֆ Իթ Իզի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») https://washapp.am վեբ դոմեյնով հասանելի կայքի (այսուհետ՝ «Կայք»), դրան առնչվող WashApp բջջային հավելվածի (այսուհետ՝ «Հավելված») և Հարթակի (սահմանումը՝ ստորև) վրա: Սույնով Ընկերությունը հասանելի է դարձնում Կայքը, Հավելվածը և Հարթակը Օգտատերերի (սահմանումը՝ ստորև) համար Ընդհանուր Պայմանների և դրանց անբաժանելի մաս համարվող Գաղտնիության քաղաքականության համաձայն:

1. **Սահմանումներ**

1.1 Հարթակ՝ Ընկերության կողմից սեփականության կամ այլ իրավունքի հիման վրա շահագործվող և սպասարկվող «WashApp» ապրանքային նշանով ներկայացվող էլեկտրոնային առևտրի պահովման գործիք հանդիսացող հարթակ՝ որը հնարավոր է մուտք գործել Կայքի և Հավելվածի միջոցով, և որը հնարավորություն է տալիս համացանցային միջավայրում կատարել Պատվեր, ներկայացնել Ծառայություններ և կատարել դրանց հետ կապված այլ գործառնություններ:

1.2 Ծառայություն(ներ)՝ Հարթակում ձեռքբերման համար նախատեսված և տվյալ պահին հասանելի ծառայություններ, որոնց գները և համապատասխան փաթեթները ներկայացված են Հարթակում:

1.3 Օգտատեր՝ Ընկերության Հարթակում գրանցված կամ Հարթակի միջոցով Պատվեր իրականացնելու ցանկություն հայտնող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

1.4 Գործընկեր՝ Ընկերության հետ համագործակցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ովքեր Հարթակի միջոցով առաջարկում են Ծառայություններ:

1.5 Պատվեր ՝ Հաճախորդի կողմից Հարթակի միջոցով ներկայացված պատվեր:

2. **Նպատակ**

Ընկերության հիմնական գործունեությունը Կայքի, Հավելվածի և Հարթակի (այսուհետ միասին հիշատակման դեպքում՝ WashApp) մշակումն ու կառավարումն է, որի միջոցով Գործընկերները կարող են իրենց Ծառայություններն առաջարկել Հաճախորդներին: Բոլոր դեպքերում, Ընկերության դերը պարզապես միջնորդի դեր է, և նրա միակ պարտականությունն ու խնդիրն է կառավարել Հարթակը, որը հեշտացնում է Օգտատիրոջ և Գործընկերոջ միջև կապը: Ընդհանուր Պայմանների 10-րդ բաժնի համաձայն՝ Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում Հարթակի միջոցով առաջարկվող Ծառայությունների համար:

3. **Ընդհանուր դրույթներ**

3.1. Մուտք գործելով Կայք և/կամ Հավելված, գրանցվելով Հարթակում և/կամ պատվիրելով Ծառայություններ՝ Օգտատերերը ընդունում են Ընդհանուր Պայմանները, ներառյալ Գաղտնիության քաղաքականությունը և համաձայն են դրանց: Ցանկացած Օգտատեր, ով համաձայն չէ Ընդհանուր Պայմաններին, պետք է ձեռնպահ մնա Կայքը, Հավելվածը և/կամ Հարթակը օգտագործելուց:

3.2. Մուտք գործելով Կայք և/կամ Հավելված, գրանցվելով Հարթակում և/կամ պատվիրելով Ծառայություններ՝ Օգտատերերն Ընկերությանը տրամադրում կամ հասանելի են դարձնում Գաղտնիության քաղաքականության մեջ նկարագրված անձնական տվյալները:

3.3. Եթե Օգտատերերը տրամադրում է որևէ կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի տեղեկություն, կամ եթե Ընկերությունը ունի հիմնավոր պատճառներ կասկածի տակ դնելու այդ տեղեկության ճշմարտացիությունը,

ճշգրտությունը կամ ամբողջականությունը, ապա այն կարող է մերժել Օգտատիրոջ հետագա մուտքը Հարթակ և/կամ հրաժարվել Ծառայությունների մատուցումից:

3.4. Հարթակում գրանցվելիս Օգտատերը տրամադրում է հեռախոսահամար և ընտրում է գաղտնաբառ, որը խիստ գաղտնի է և ենթակա չեն փոխանցման Հաճախորդի կողմից որևէ երրորդ անձի: Հաշիվների անվտանգությունը բարձրացնելու նպատակով Ընկերությունը խորհուրդ է տալիս այլ հարթակներում չօգտագործել նույն մուտքային տվյալները:

3.5. Եթե Օգտատիրոջ մուտքային տվյալները գողացվել, հրապարակվել, կորել կամ վերջինիս կողմից մոռացվել են, ապա Օգտատերը պարտավորվում է էլեկտրոնային փոստի կամ հեռախոսազանգի միջոցով անմիջապես տեղեկացնել Ընկերությանը՝ հաշիվը արգելափակելու կամ գաղտնաբառի վերանայման նպատակով:

## 4. Օգտատերերի Մուտք և Գրանցում

4.1 Գրանցման հիմնական պահանջներ. Հարթակի Օգտատեր դառնալու համար Օգտատերերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- լինել առնվազն 18 տարեկան:
- լրացնել հավաստի անձնական տվյալներ պահանջող գրանցման ձևաթղթի պարտադիր դաշտերը, օրինակ՝ հեռախոսահամարը և գաղտնաբառը:
- Հավաստիացնել, որ կարդացել են և ընդունում են  Ընդհանուր պայմանները:
- Հավաստիացնել, որ կարդացել են և ընդունում են Գաղտնիության քաղաքականությունը:

Վերոնշյալ բոլոր պահանջների միաժամանակյա բավարարման դեպքում Ընկերությունն Օգտատիրոջը տրամադրում է գրանցման հաստատումը, ինչպես նաև գործող օրենսդրության համաձայն անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկություն որոնք անհրաժեշտ են Հարթակից օգտվելու համար:

4.2 Օգտատերերի հաշիվ և պարտականություններ. Հարթակում գրանցվելիս Օգտատերերը պետք է տրամադրեն հեռախոսահամար և ընտրեն գաղտնաբառ: Հավելվածում գրանցման գործընթացն ավարտելու համար Օգտատերերը պետք է տրամադրեն որոշ տվյալներ, այդ թվում՝ ավտոտրանսպորտային միջոցի պետ. համարանիշը և վճարային մեթոդի տվյալներ: Ընկերությունը չի մշակում և/կամ պահպանում Օգտատերերի՝ վճարային ծառայություն մատուցող կազմակերպության կողմից մշակվող և պահվող վճարման տվյալները, ինչպես որ նկարագրված է սույն Ընդհանուր պայմաններում և Գաղտնիության քաղաքականության մեջ:Օգտատերը երաշխավորում է, որ Հարթակում գրանցման ձևաթղթերում իր ինքնության և իրավասության վերաբերյալ Ընկերությանը տրամադրած ամբողջ տեղեկությունը ճշմարիտ, ճշգրիտ և ամբողջական է: Բացի այդ, Օգտատերերը պարտավորվում են, ըստ անհրաժեշտության, պարբերաբար թարմացնել իրենց տվյալները, Ծառայությունների անխափան մատուցումն ապահովելու նպատակով: Եթե Օգտատերը տրամադրում է որևէ կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի տեղեկություն, կամ եթե Ընկերությունը համարում է, որ կան հիմնավոր պատճառներ կասկածի տակ դնելու այդպիսի տեղեկության ճշմարտացիությունը, ճշգրտությունը կամ ամբողջականությունը, Ընկերությունը կարող է մերժել տվյալ Օգտատիրոջ կողմից ընթացիկ կամ հետագա մուտքը Հարթակ, ինչպես նաև Հարթակից և/կամ Ծառայություններից օգտվելը:Օգտատերերը պարտավորվում են չհրապարակել իրենց հաշվի մանրամասները և հասանելի չդարձնել երրորդ անձանց մուտքը այդ տվյալներ: Օգտատերերը կրում են միանձնյա պատասխանատվություն երրորդ անձանց կողմից նման տվյալների օգտագործման կամ Հարթակում նշված Ծառայությունների կատարման համար: Ընկերությունը չի կարող երաշխավորել գրանցված Օգտատերերի ինքնությունը, և, հետևաբար, պատասխանատվություն չի կրում չգրանցված երրորդ անձանց կողմից գրանցված Օգտատիրոջ ինքնության օգտագործման համար: Օգտատերերը պարտավորվում են Ընկերության կողմից հասանելի կապի ուղիների միջոցով անմիջապես տեղեկացնել Ընկերությանը իրենց մուտքային տվյալների ապօրինի ձեռքբերման, հրապարակման կամ կորստի դեպքում: Օգտատերերն ընդունում են, որ ներբեռնելով, ներդնելով, գրանցվելով, օգտագործելով կամ մուտք գործելով Հարթակ, Ընկերությունը կարող է օգտագործել ավտոմատ միջոցներ (ներառյալ, օրինակ, քուքիներ)՝ Օգտատերերի սարքի և Հարթակի օգտագործման մասին տեղեկություններ հավաքելու համար:

## 5. Պատվերների ձևակերպման կարգը և իրականացման պայմանները

5.1 Օգտատերը նախքան Պատվերի գրանցելը ընտրում է Ծառայությունը:

5.2 Օգտատերը Ծառայությունն ընտրելիս պարտավորվում է տրամադրել Ծառայության մատուցման համար անհրաժեշտ և հավաստի տեղեկություններ:

5.3 Օգտատերը Պատվերը ձևակերպելու ընթացքում ծագած խնդիրների լուծման համար կարող է կապ հաստատել Ընկերության զանգերի կենտրոնի/աջակցության ծառայության հետ:

5.4 Պատվերը հաստատվելուց հետո Ծառայությունների մատուցումն իրականացվում է համապատասխան Գործընկերոջ կողմից՝ Հարթակի միջոցով Պատվերի և Օգտատիրոջ վերաբերյալ ստացված տվյալների հիման վրա:

5.5 Ծառայություններն ընդունելու պահին Օգտատերը Գործընկերոջ ներկայությամբ պարտավոր է ստուգել մատուցված Ծառայությունների համապատասխանությունը Պատվերում առկա նկարագրին:

5.6 Եթե Օգտատերը չի ներկայացնում ավտոմեքենան իր կողմից ընտրված Գործընկերոջ հասցե իր կողմից նախապես ընտրված ժամին, տվյալ ժամից 15 րոպե անց ստանում է ծանուցում Ընկերությունից, որ 5 րոպեից նրա Պատվերը ավտոմատ կչեղարկվի: Տվյալ ժամանակահատվածն ավարտվելուն պես Օգտատերը զրկվում է Ծառայություններից օգտվելու հնարավորությունից, իսկ Գործընկերը կարող է կատարել այլ Պատվեր:

5.7 Եթե Օգտատերը կատարում է Պատվեր, բայց հետագայում չեղարկում է այն Պատվերը սկսվելուց ոչ ավելի քան 30 րոպե առաջ, Օգտատերը զրկվում է Ծառայություններից օգտվելու հնարավորությունից, իսկ Գործընկերը կարող է կատարել այլ Պատվեր:

5.8 Ընդհանուր Պայմանների 5.6 և 5.7 կետերով սահմանված դեպքերում Ծառայությունները չմատուցելու համար Ընկերությունը և Գործընկերն ազատվում են պատասխանատվությունից, իսկ անկանխիկ վճարող Օգտատիրոջ վճարային քարտից գանձվում է տույժ, Պատվերի գումարի 25%-ի չափով: Ընդհանուր Պայմանների 5.7 և 5.8 կետերով սահմանված դեպքերի առաջացումը կարող է բացասաբար ազդել կանխիկ վճարող Օգտատերերի ընդհանուր գնահատականի վրա, և վերջիններս կարող են ընդհուպ մինչև զրկվել Հարթակից օգտվելու հետագա հնարավորությունից:

5.9 Հաճախորդն իրավունք ունի պահանջել թերություններով մատուցված Ծառայությունների տեկում՝ համապատասխան ՀՀ օրենսդրության: Ծառայությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Օգտատերը իրավունք ունի նախապես անկանխիկ վճարման դեպքում, հետ ստանալ Պատվերով նախատեսված գնին համապատասխան գումար, իսկ կանխիկ վճարման դեպքում, չվճարել Պատվերի գումարը:

5.10 Վերոնշյալ 5.9 կետով սահմանված պահանջները ներկայացնելու ցանկություն ունեցող Օգտատերը պետք է կապ հաստատի Ընկերության զանգերի կենտրոնի հետ՝ ուղղորդման նպատակով:

## 6. **WashApp-**ի Օգտագործումը

WashApp-ը Օգտագործողին տրամադրվում է անձնական ոչ առևտրային օգտագործման նպատակով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Գործընկերների կողմից տրամադրվող տեղեկատվության բովանդակության և/կամ արդիականության, այդ թվում՝ Գործընկերների Ծառայությունների արժեքի և դրանց ընթացիկ մատչելիության մասին տեղեկատվության վերաբերյալ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ և Գործընկերների կողմից կատարված ֆինանսական և ցանկացած այլ գործարքների, ինչպես նաև Օգտատերերի կողմից Ծառայությունների ձեռքբերման ցանկացած հետևանքների համար: Ծառայություններից օգտվելով՝ Օգտատերը Ընկերությանը թույլ է տալիս մշակել Օգտատիրոջ անձնական տվյալները և դրանք փոխանցել Ընկերության Գործընկերներին՝ բոլոր դեպքերում Օգտատիրոջը Ծառայություններ մատուցելու նպատակի շրջանակերում: Ծառայությունից օգտվելիս Օգտատիրոջ անձնական տվյալները մշակվում են Գաղտնիության Քաղաքականությամբ սահմանված կարգով:

## 7. Վճարումներ

7.1 Ծառայությունների արժեքը նշվում է ՀՀ դրամով և ներառում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը: Օգտատիրոջ հարմարավետության համար, Ծառայությունների արժեքը ՀՀ դրամի հետ զուգահեռաբար

կարող է, որպես ուղենիշ, արտահայտվել նաև այլ արժույթով՝ հաշվարկված ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

7.2 Ծառայությունների համար Օգտատերը վճարումը իրականացնում է ՀՀ դրամով, անկանխիկ կամ կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով վճարելու դեպքում, գումարը վճարվում է Գործընկերներին:

7.3 Ընտրելով անկանխիկ եղանակով վճարման տարբերակը՝ Օգտատերը հաստատում է, որ տեղյակ է և համաձայն երրորդ անձ հանդիսացող բանկերի կամ վճարահաշվարկային կազմակերպությունների կանոնների հետ, և որ Ընկերության նկատմամբ վերջիններիս կողմից սահմանված պայմանների հետ կապված որևէ առարկություն և/կամ պահանջ չունի:

## 8. Մտավոր սեփականություն

8.1 Ընկերությունը ծրագրային ապահովմանը, Կայքին, Հավելվածին և Հարթակին վերաբերող մտավոր սեփականության բոլոր իրավունքների սեփականատերը կամ արտոնագրի, ինչպես նաև Ընկերության կողմից և/կամ նրա անունից Կայքում, Հավելվածում և/կամ Հարթակում վերբեռնվող հասանելի բովանդակության իրավատերն է: Մտավոր սեփականության այս իրավունքները, ինչպես նաև դրանցում պարունակվող տեքստը, պատկերները, գրաֆիկական դիզայնը, նավիգացիոն կառուցվածքը, տեղեկությունն ու բովանդակությունը պատկանում են Ընկերությանը, ով ունի բացառիկ իրավունք՝ ցանկացած ձևով օգտագործելու իր իրավունքները, մասնավորապես, վերարտադրման, տարածման, հրապարակման և փոխակերպման իրավունք՝ համաձայն մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Չնայած վերը նշվածին, Ընկերությունը չի կարող լինել այնպիսի բովանդակության կամ արտոնագրի սեփականատերը, ինչպիսիք են, ի թիվս այլոց, Ընկերության հետ գործնական հարաբերություններ չունեցող ընկերությունների անունները կամ պատկերները: Նման դեպքերում Ընկերությունը ձեռք է բերում այդ բովանդակությունը հրապարակային մատչելի աղբյուրներից, և ձեռքբերված բովանդակությունը ոչ մի դեպքում Ընկերության պատկանող որևէ իրավունքի հետ առնչություն չի ունենա:

8.2 Ցանկացած երրորդ անձի (ներառյալ, բայց չսահմանափակվելով, Օգտատերերի) կողմից կամ վերջինիս անունից Կայքում, Հավելվածում և/կամ Հարթակում վերբեռնված բովանդակությունը համարվում է նրանց բացառիկ սեփականությունը. հետևաբար, նրանք լիովին պատասխանատու են ցանկացած վնասի, պահանջի և/կամ պատասխանատվության համար, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխել իրենց կողմից և/կամ իրենց անունից վերբեռնված բովանդակությունից:

8.3 Հարթակ մուտք գործելու Օգտատիրոջ թույլտվությունը չի ենթադրում Ընկերության կողմից որևէ մտավոր կամ արդյունաբերական սեփականության ցանկացած իրավունքից հրաժարում, փոխանցում, արտոնագրում, ամբողջական կամ մասնակի զիջում: Արգելվում է Հարթակի բովանդակությունը ջնջելը, անտեսելը կամ որևէ կերպ կեղծելը: Արգելվում է նաև հասարակական կամ առևտրային նպատակներով Հարթակում ներառված բովանդակության մասամբ կամ ամբողջությամբ փոփոխելը, կրկնօրինակելը, վերօգտագործելը, մշակելը, վերարտադրելը, հրապարակելը, վերբեռնած ֆայլերի երկրորդ կամ հետագա հրապարակումները, փոստով ուղարկելը, փոխանցելը, օգտագործելը, տարածելը՝ բացառությամբ Ընկերության գրավոր թույլտվության կամ անհրաժեշտության դեպքում՝ սեփականատիրոջ համապատասխան իրավունքների հիմքով:

8.4 Գրանցվելով Հարթակում և համաձայնելով սույն Ընդհանուր Պայմանների հետ՝ Օգտատերը շնորհում է Ընկերությանն իր կողմից տրամադրվող կարծիքների, մտքերի, առաջարկների առնչությամբ միջազգայնորեն կիրառելի, փոխանցելի, անվճար, անհատույց իրավունք՝ ենթալիցենզավորման իրավունքով, օգտագործելու, կրկնօրինակելու, փոփոխելու, ածանցյալ աշխատանքներ ստեղծելու, տարածելու, հրապարակելու և կիրառության մեջ դնելու իրավունքով՝ Օգտատիրոջ հետ հետագա հաղորդակցությամբ կամ առանց դրա, ինչպես նաև առանց նման կիրառությունների համար որևէ գումար վճարելու իրավասության: Վերոնշյալն ընկալվում է որպես նշված իրավունքների տրամադրում միայն գործող օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն չափով:

## 9. Պատասխանատվություն

9.1 Կողմերը պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

9.2 Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց անունից գրանցված Օգտատիրոջ ինքնության, ինչպես նաև հաշվի օգտագործման համար:
9.3 Ընկերությունը պատասխանատու չէ Օգտատիրոջ կողմից տրամադրված տվյալների ճշտության և վավերականության համապատասխանության և դրանց պատճառով առաջացած հետևանքների համար:
9.4 Ընկերությունը Գործընկերոջ և Օգտատիրոջ միջև ծագող պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում միայն այն մասով, որը կապված է իր կողմից Կայքը, Հավելվածը և Հարթակը սպասարկելու, Պատվերը գրանցելու և փոխանցելու հետ, եթե այլ բան սահմանված չէ սույն Ընդհանուր Պայմաններում:
9.5 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների որակի, և այլ որակական հատկանիշների համար:

**10.** Պատասխանատվության սահմանափակում

Կայքը, Հավելվածը և Հարթակը մատուցվում է «ինչպես կա» և «ինչպես հասանելի է» հիմունքներով՝ առանց հստակ կամ ենթադրվող երաշխիքի, ներառյալ, առանց սահմանափակման, դրանց աշխատանքի, մուտքի իրավունքի, հասանելիության, ամբողջականության, ճշտության կամ համապատասխանության վերաբերյալ երաշխիքները: Կայքից, Հավելվածից և Հարթակից օգտվելու արդյունքում առաջացած բոլոր ռիսկերի համար ամբողջապես և բացառապես պատասխանատու է Օգտատերը: Ընկերությունը ձեռնարկում է ողջամիտ միջոցներ Կայքը, Հավելվածն ու Հարթակն ամբողջովին աշխատունակ վիճակում պահպանելու համար: Միևնույն ժամանակ, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Կայքում, Հավելվածում ու Հարթակում հնարավոր թերությունների կամ բովանդակության սխալների համար: Ընկերությունը չի կրում որևէ պատասխանատվություն Կայքից, Հավելվածից, Հարթակից կամ Ծառայություններից օգտվելու, ինչպես նաև դրանցում առկա տեղեկությանը վստահելու արդյունքում Ձեր կողմից ցանկացած գործողություն կատարելու կամ չկատարելու արդյունքում առաջացած ցանկացած տեսակի ուղղակի, անուղղակի կամ հետևանքային վնասների, տվյալների, եկամտի կամ շահույթի կորստի, գույքին պատճառած վնասի կամ գույքի կորստի և երրորդ անձանց կողմից ներկայացված բողոքների համար. այս ամենի համար Օգտատերն անձամբ է կրում պատասխանատվություն:

**11.** Ֆորս Մաժոր

11.1 Կողմերն ազատվում են սույնով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե այն առաջացել է անհաղթահարելի ուժի հետևանքով, ներառյալ բայց չսահմանափակված՝ հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի, պետական մարմինների գործողությունների կամ անգործությունների (մասնավորապես արժութային օպերացիաների սահամանափակումները), զինված գործողությունների հետևանքով, եթե այդ հանգամանքները ուղղակիորեն ազդել են սույն Ընդհանուր Պայմանների կատարման վրա: Նշված հանգամանքների վրա հասնելու դեպքում պարտավորությունների կատարումը հետաձգվում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում գործել են այդ հանգամանքները:
11.2 Կողմը, որը անկարող է կատարել պարտավորությունները փորս մաժորային հանգամանքի հետևանքով, պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել մյուս կողմին այն հանգամանքների ծագման և/կամ դադարման մասին, որոնք խոչընդոտում են իրականացնելու իր պարտավորությունները: Փաստերը, որոնք մատնանշում է համապատասխան կողմը իր վերը նշված ծանուցման մեջ, պետք է հաստատված լինեն իրավասու մարմնի կողմից:

**12.** Ծանուցումներ

Օգտատիրոջ կողմից հաշվի գրանցման ընթացքում կամ պրոֆիլում նշված կոնտակտային հեռախոսահամարը, push ծանուցումների կարգավորումները և/կամ էլ. հասցեն համարվում են հիմք հետագա բոլոր ծանուցումների համար: Ծանուցումը կհամարվի պատշաճ կատարված, եթե այն ուղարկվել է SMS-ի, Հարթակի միջոցով push ծանուցման, կամ Օգտատիրոջ կողմից նշված էլեկտրոնային հասցեի միջոցով՝ անկախ Օգտատիրոջ կողմից այն ստանալու կամ

հաստատելու փաստից: Օգտատերն ինքն է պատասխանատու իր սարքում ծանուցումների թույլտվությունների ակտիվ լինելու և տրամադրված կոնտակտային տվյալների ճշգրտության և արդիականության համար:

## **13.** Իրավունքներից հրաժարում և վավերականություն

12.1 Ընկերության կողմից սույն Ընդհանուր Պայմաններով սահմանված որևէ ժամկետից կամ պայմանից որևէ հրաժարում չի համարվում այդպիսի ժամկետի կամ պայմանի հետագա կամ շարունակական հրաժարում, և Ընկերության կողմից սույն Ընդհանուր Պայմաններով որևէ իրավունք կամ դրույթ չպահանջելը չի հանդիսանում հրաժարում այդպիսի իրավունքից կամ դրույթից:
12.2 Ընդհանուր Պայմանների որևէ դրույթ անվավեր կամ առոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:

## **14.** Կիրառելի օրենք և վեճերի լուծման կարգ

14.1 Սույն Ընդհանուր Պայմանները, ինչպես նաև Ընդհանուր Պայմաններով չկարգավորված Ընկերության և Օգտատերերի մյուս փոխհարաբերությունները կարգավորվում և մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:
14.2 Սույն Ընդհանուր Պայմաններից բխող բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
14.3 Օգտատերերի կողմից Ընկերությանը կամ ուղղված դիմում/բողոքները կարող են ներկայացվել. բանավոր կարգով՝ զանգահարելով Ընկերության զանգերի կենտրոն +37494503350 հեռախոսահամարով, կամ գրավոր կարգով՝ support@washapp.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով:

## **15.** Եզրափակիչ դրույթներ

15.1 Ընդհանուր Պայմաններով չկարգավորված Օգտատիրոջ և Ընկերության մյուս փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:
15.2 Ընկերությունն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ փոխանցել Ընդհանուր Պայմաններով ամրագրված իր իրավունքները կամ զիջել իր պարտավորություններն այլ անձի՝ առանց Օգտատիրոջ համաձայնության:
15.3 Ընկերությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Ընդհանուր Պայմաններում: Փոփոխությունները և/կամ լրացումներն ուժի մեջ են մտնում Կայքում հրապարակվելու կամ հրապարակման մեջ նշված օրը: Ընկերության հայեցողությամբ այդ փոփոխությունների/լրացումների մասին Օգտատերերը կարող են ծանուցվել նաև այլ եղանակներով, այդ թվում՝ կարճ հաղորդագրությունների (SMS, push notification) միջոցով: Օգտատերերը պարտավոր են անձամբ հետևել (ստուգել) Ընկերության կողմից սույն Ընդհանուր Պայմանների մեջ կատարվող փոփոխություններին:
15.4 Սույն Ընդհանուր Պայմանները կազմված են հայերեն լեզվով, սակայն կարող են թարգմանվել և զուգահեռ հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով հրապարակումների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը: